


«ԷՆ ԷՌ ԷՄ (ՆԵՅՉՐԼ ՌԻՍՈՐՍ ՄԵՆԵՋՄԵՆԹ)»  
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



ԴԱՍՏԱԿԵՐՏԻ ՊՂԻՆՁ-ՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ  
ՊԱՇԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ  
ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ  
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(2022թ. տարեկան)

## Բովանդակություն

|   |   |
|---|---|
| ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....   | 3 |
| ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....                          | 3 |
| ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԶՐԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ .....                     | 3 |
| ՀՈՂԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ .....                                   | 4 |
| ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ.....                                      | 4 |
| ԲՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐ .....                  | 5 |
| ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ.....                              | 5 |
| ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ .....                                    | 5 |
| ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴՈՒՄ ՓՈՇՈՒ ՄԱՍՆԻԿՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ..... | 5 |
| ԱՂՄՈՒԿԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ .....                  | 6 |

## **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրը ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի տարածքում է, Զանգեզուրի լեռնաշղթայի հարավ-արևելյան ճյուղավորման՝ Բարգուշատի լեռնաշղթայի հյուսիսային լանջին՝ Դաստակերտ քաղաքից 3 կմ դեպի հարավ, ծովի մակերևույթից 2050-2500մ բարձրության վրա:

Ներկայում նախատեսվում է հանքավայրի պաշարների վերագնահատման նպատակով իրականացնել երկրաբանական ուսումնասիրություններ, որի թույլտվությունը տրամադրվել է ընկերությանը 2022 թվականի հոկտեմբերի 7-ին:

Ուսումնասիրության ենթակա տարածքը ՀՀ Սյունիքի մարզի Դաստակերտ քաղաքի հարավային մերձակայքում է՝ 50.0 հա մակերեսով: Տարածքը եզրագծերով ներառում է Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի Կենտրոնական և Հարավային տեղամասերը:

## **ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Հանքավայրի տարածքի համար մթնոլորտային օդի ֆոնային տվյալները բացակայում են՝ այդ տարածքում դիտակետներ չկան և դիտարկումներ չեն կատարվում:

Տարածքը գտնվում է բավականին հեռու շրջանի արդյունաբերական ձեռնարկություններից (22կմ Սիսիան քաղաքից՝ իր արդյունաբերական հզորություններով): Մոտակա բնակավայրերը փոքր են, ոչ բնակաշատ (ըստ 2011թ. մարդահամարի արդյունքների առկա բնակչությունը կազմում էր՝ Դաստակերտ քաղաքում՝ 243 մարդ, Նժդեհ (Սոֆլու) գյուղում՝ 92 մարդ, Յողունի գյուղում՝ 67 մարդ):

Համաձայն «ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույցի, մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են՝

Փոշի՝ 0.2 մգ/խմ;

Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/խմ;

Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/խմ;

Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/խմ:


Հանքավայրի շրջակայքում մթնոլորտային օդը աղտոտված չէ և չի կրում տեխնաձին ազդեցություն:

## **ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Շրջանի հիմնական ջրային հոսքը Որոտան գետն է, իր Սիսիան, Այրի-գետ և Լոր վտակներով:

Ուսումնասիրվող տարածքի հիմնական գետը Կիշկոշտն է, որի վրա մշտական դիտարկումներ չեն իրականացվել և ինչպես երևում է Նկար 1-ից, Կիշկոշտ գետի վրա ջրի մոնիթորինգի մշտական դիտակետերը բացակայում են:

**ՈՐՈՏԱՆԻ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՅԱՆՑ**



**Նկար 1. Որոտան գետի ավազանի մակերևութային ջրերի մոնիթորինգի դիտացանցը և Կիշկոշտ գետի տեղադիրքը**

Կիշկոշտ գետի հիդրոլոգիական բնութագրիչները հետևյալն են. երկարությունը 4.76 կմ է, ջրիավաք ավազանի մակերեսը՝ 11.9 քկմ, տարեկան բազմամյա միջին ելքը 0.26 խմ/վրկ, Առավելագույն ելքը՝ 1.56 խմ/վրկ, Բացարձակ նվազագույն ելքը՝ 0.05 խմ/վրկ:

**ՀՈՂԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Հողային տիպերից տեղանքին բնորոշ են լեռնամարզագետնատափաստանային և լեռնանատառային դարչնագույն հողերը:

Հողառաջացնող ապարներից են՝ դեյուվիալ և դեյուվիալ-պրոյուվիալը, ժամանակակից հունային, դարավանդային և արտաբերման կոների պրոյուվիալ և այլուվիալ-պրոյուվիալ, էյուվիալ և էյուվիալ-դեյուվիալ, սողանքային և սոլիֆյուլցիոն, սառցադաշտային:

Հողերի էրոզվածության աստիճանը 25-70% է:

**ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ**

Ուսումնասիրվող տարածքը բուսաշխարհագրական տեսակետից պատկանում է Բորեալ ֆլորիստիկ ենթաթագավորության Ցիրկումբորեալ գավառի Կովկասյան

ենթագավառի Չանգեզուրի ֆլորիստիկ շրջանին (Թախտաջյան, 1978): Տարածքի բուսականությունն ունի արտահայտված քսերո-մեզոֆիլ, մեզո-քսերոֆիլ և մեզոֆիլ բնույթ՝ յուրահատուկ են տափաստանները, մարգագետնատափաստանները, մարգագետինները, ինչպես նաև գետամերձ բուսականությունը: Տարածքում տեղ-տեղ արտահայտված է թփուտային, ժայռային և քարացրոնային բուսականությունը: Ֆոնային բուսատեսակները համեմատաբար քիչ են, ֆլորան հիմնականում տարախոտային է:

### **ԲՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐ**

Ուսումնասիրվող տարածքում և մոտակայքում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան: Մոտակա բնության հատուկ պահպանվող տարածքը «Չանգեզուր» պետական արգելավայրն է, որը գտնվում է նախատեսվող ուսումնասիրության տարածքից շուրջ 3 կմ հեռավորության վրա:

### **ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ**

Ուսումնասիրման ենթակա տարածքում և նրա անմիջական մերձակայքում ու շրջապատում հնագիտական հուշարձանների վերգետնյա նշաններ չկան, չեն գտնվել նաև նյութական մշակույթի մնացորդներ:

### **ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ**


Քանի որ Ընկերությունն ընդերքօգտագործման թույլտվությունն ստացել է 2022 թվականի հոկտեմբերի 7-ին, ուստի մշտադիտարկումներ տարեկան հաշվետվության համար հիմք են հանդիսացել 2022 թվականի 4-րդ եռամսյակում իրականացված մշտադիտարկումների արդյունքները:

Դաշտային չափումների ժամանակ իրականացվել են հետևյալ բնապահպանական ընկալիչների մշտադիտարկումները՝

1. Մթնոլորտային օդում փոշու մասնիկների մշտադիտարկումներ (PM 2.5 , PM 10)
2. Աղմուկի մակարդակի մշտադիտարկումներ

### **Մթնոլորտային օդում փոշու մասնիկների մշտադիտարկումներ**

Մթնոլորտում փոշու մասնիկների չափումներն իրականացվում են կիրառելով Aerocet 831 (նկար 2) սարքավորում, որը չափում է օդում ինչպես PM2.5, այնպես էլ PM10 մասնիկները: Չափումներն իրականացվել են 9 կետում: 4-րդ եռամսյակի ընթացքում փոշու մասնիկների մշտադիտարկումների միջինացված տվյալները ներկայացված են աղյուսակ 1-ում.



Նկար 2. Aerocet 831

Աղյուսակ 1. Փոշու մասնիկների մշտադիտարկման եռամսյակային միջինացված արդյունքները

| Դիտակետի անվանում | Pm 2.5 | Pm 10 |
|-------------------|--------|-------|
| D-1               | 0.009  | 0.02  |
| D-2               | 0.012  | 0.09  |
| D-3               | 0.0069 | 0.04  |
| D-4               | 0.014  | 0.06  |
| D-5               | 0.0064 | 0.01  |
| D-6               | 0.007  | 0.03  |
| D-7               | 0.011  | 0.038 |
| D-8               | 0.007  | 0.11  |
| D-9               | 0.0082 | 0.013 |

**Աղմուկի մակարդակի մշտադիտարկումներ**

Աղմուկի չափումները իրականացվել են նույն 9 կետերում, ինչ փոշու մասնիկների չափումները:

Եռամսյակային միջինացված արդյունքները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Աղմուկի մշտադիտարկման եռամսյակային միջինացված արդյունքները

| Դիտակետի անվանում | Աղմուկի չափման միջինացված արդյունքները, դԲ |
|-------------------|--|
| N-1               | 45.7                                       |
| N-2               | 47.5                                       |
| N-3               | 51.2                                       |
| N-4               | 46   |

|     |      |
|-----|------|
| N-5 | 48.3 |
| N-6 | 48.7 |
| N-7 | 45.9 |
| N-8 | 51.2 |
| N-9 | 49.6 |


Տեղեկատվությունը ներկայացրեց՝

«Էն Էն Էմ (Նեյչրլ Ռիսորս Մենջմենթ)» ՓԲԸ, ՀՀ ք. Երևան, 011770707, [info@nrm.am](mailto:info@nrm.am)

(գտնվելու և գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը, կայքը, էլեկտրոնային հասցեն՝ առկայության դեպքում)

Ղեկավար

Սամվել Իվանյան  
գլխավոր տնօրեն  
(պաշտոնը, անունը, ազգանունը)

  
16.02.2023թ.  
(ստորագրությունը, ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

